գմանութեան համար։ Հայերէն թարգմանութեան Ա եւ Բ ճառերու մեկնութիւններն կիսով չափ կը պակսին Migneի հրատարակութեան մէջ. իսկ Գ եւ Դ ճառերուն ընդհակառակն ունին աւելի հատուածներ, որոնք հայ թարգմանութեան մէջ կը պակսին, թէեւ ոչ ամենը. վասն զի կը պատահինք այնպիսի հատուածներու, որոնք արդէն գետեղուած էին հայուն Ա եւ Բ ճառերու մեկնութեանց մէջ։ Շեն պակսիր նաեւ հատուածներ, որոնք հայերէնի մէջ երկու մաս եղած են, ցրուած մէկ մասն Ա կամ Բ եւ միւս մասն Գ կամ Դ ճառերու մէջ. նոյնպէս հատուածներ, որոնք յունարէնին մէջ երկու մաս եղած են, մինչ հայերէնի մէջ մէկ են։ Կան դարձեալ հատուածներ ալ, որոնք ոչ հայուն մէջ եւ ոչ Բիւլիոսի լատին թարգմանութեան մէջ կը գտնուին. որ կը նշանակէ թէ Բիւլիոսի օրինակն թէեւ յոռի կը կոչուի, սակայն այնու հանդերձ բաւական հին ընթերցուածներ կը բովանդակէ։ Այս ամենը նկատելով՝ աւելորդ աշխատութիւն համարեցանք երկայն ժամանակ դեգերիլ այս ինդրով. եւ արդէն Հ. Զարբ. նշանակած է իւր "Մատենադարան"ին մէջ հայուն համապատասխան էջերը Տիր. Մայիի տպագրութեան վրայէն։ Ցընթացս գրութեանս քանի մ՝օրինակ կը տեսնեն մեր ընթերցողներն։

* Ն. Ա.

(Մնացեալը էջ ՈՒԷ մ։)

ՀԻՆ ՀԱՅՈՑ ԹՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԷՊԵՐԸ ԵՒ ՄԱՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ

(Շարունակութիւն։)

Բ. ՀԱՅԿ

4. Հայկի ապստամբութիւնն եւ Ճակատը Բէլի հետ։ Ահա այս ազգային խիզախ նահապետը, օժտուած ոչ միայն մարմնաւոր այժով, իբրեւ "քաջ եւ երեւելի ի մէջ սկայիցն", այլ եւ վեհանձն եւ անհնազանդ ոգով, իբրեւ պաշտպան նեղեալների, խրոխտացաւ ձեռք բարձրացնել տիտանեան Բէլի բռնաւորութեան դէմ, չկամենալով խոնարհիլ նորա ամբարտաւան լծի տակ եւ իւր սեբուղդը ստրկութեան մատնել, նա չլեց գնաց Բաբելոնից "որդւովք իւրովք եւ դստերաք եւ որդւոց որդւովքն", թւով իբրեւ 300, դէպի հիւսիս՝ երկիրն Արարատայ (Խոր. Ա, Ժ)։ Այսպէս կը սկսի Հայ ժողովրդական աւանդութիւնն՝ նախահարց գաղթման մասին ի Հայս։ Նուաճելով երկրի մի մասը "ի լեռնոտին միում ի դաշտավայրի", Հայկ տալիս է այս կալուածքը կադմին, Արմենակայ որդուն, ի ժառանգութիւն։ "Այս արդարացուցանէ զանգիր հին ասացեալ զրոյցս", կ'աւելացնէ մեր պատմագիրը, բնաւ չկամենալով ուրանալ այն աղբիւրը, որտեղից կը բղխեր ազգի առաջին գիւցազների գործոց յիշատակը։ Ինքն նահապետը ապա դիմեց դէպի հիւսիս-արեւմուտք եւ մնակեցաւ Հարքում, որտեղ շինեց Հայկաշէն գիւղը. տեղի մնակիչքն ինքնակամ հնազանդեցան նորան։[1] "Արդարացուցանէ եւ այս զասացեալ զրոյցս անգիրս", ախորժելով երկրորդէ խորհեցին, որին հարկաւ հաճելի էր կրկին դէպք ունենալ՝ իւր ընթերցողին հաւատ ներշնչելու առ իւր գրաւոր "մատեանն"։

Մինչեւ այստեղ մեր մատենագիրը գրեթէ բառացի կը կրկնէ այն, ինչ որ կ'աւանդէ Անանուն, անշուշտ իւր առջեւ ունենալով իւր նախորդի գործը։ Ապա երկու պատմագրեր միմեանցից բաւական կը տարբերին՝ տեղի ունեցած ճակատի մանրամասնութեանց նկատմամբ։ Ցարբերութիւնք երբեմն այն աստիճան զգալի են, որ թոյլ են տալիս երկու խմբագրութիւններ մտ առ մտ միմեանց հետ համեմատել։

Հայկայ որսորդ տիտանեան Բէլը, այսպէս կը պատմէ Անանուն, իմանալով, որ "մի ոմն Հայկ անուն նահապետ ազգացն ոչ հնազանդեցաւ ի ծառայութիւն Նորա, եւ ոչ կանգնէր ի տան իւրում զպատկեր Նորա եւ ոչ մեծարէր զնա աստուածորէն շքով", վառեցաւ բարկութեամբ յանդուգն ապստամբի դէմ։ Դիւցազնի գաղթելուց յետոյ նա հետամուտ եղաւ Նորան ծանր զօրքով մինչեւ Նորա մնակատեղը՝ Արարատ երկիրը։ Կադմոս իւր ընտանեաք հանդերձ շտապեց ապաստանիլ տան նահապետի մօտ, բերելով Նորան այս անակնկալ գոյժը. Հայկ՝ առնելով Արամենակ, կադմոս եւ "զորդիս նոցա եւ զորդիս եւիանեցունց դստերաց իւրոց", ճակատեցաւ թշնամու հետ, սակայն, չկարողանալով դիմադրել բազմութեանն, գնաց փախստական, հուպ ընդ հուպ հալածուած Բէլից։ Կանգ առաւ յանկարծ հայ դիւցազնն եւ որոտաց գոռոզ բռնաւորի երեսին՝ "Ցի՞ պնդեալ գաս զչետ իմ. դարձիր անդրէն ի

[1] Թէ Հայկաշէնի շինութիւնն եւ բնիկ ժողովրդի նուաճումն եւ թէ ինչ ինչ մանրամասնութիւններ, որոց վերայ մատնացոյց եմ անելու ստորեւ, ծանօթ չեն Անանունին։

digitised by A.R.A.R.@

տեղի քո՝ զի մի մեռանիցիս այսաւր ի ձեռաց իմոց. քանզի հէշ վէպի նեռ իմ իմիք„։ Բէլ պատասխանեց անդամութեամբ՝ "Ալան այնոր ի՛կ զի մի անկցիս ի ձեռս մանկտւոյ իմոյ եւ մեռանիցիս. այլ եկ ի ձեռս իմ, եւ կեաց ի տան իմում խաղաղութեամբ, ունելով ի գործ զմանկունս ի տան իմոյ զորսականս։„ Այս ծանր նաւ խատինքը միայն արիւնը կարող էր լուանալ, եւ Հայկ՝ պատրաստելով իւր "որպէս հեծան հզաւր մայրաքաղաքաց„ աղեղն՝ գոչեց յոյժ զայրացած՝ "Շունն ես դու եւ յերամակէ շանց՝ դու եւ ժողովուրդ քո։ Եւ վասն այսորիկ թաւ փեցից իսկ այսաւր ի քեզ զկապարճս իմ։„ Նոյն տեսակ բանակռիւ՝ նախ քան մենամարտը՝ տեղի ունի Հոմերոսի հերոսներին, Գիրդուսիի "փաղեւանների„, Աստուածաշնչի եւ Ռուսաց ժողովրդական վէպի դիւցազանց մէջ, կազմելով ամէն մի ազգի վիպական բանահիւսութեան ընտիր հատուածներից մէկը, որ ժողովրդի նուրբ հեգնութեան, սուր ծաղրի հաւատարիմ արտայայտողն կը հանդիսանայ։ Երկու ախոյեանների ճակատը երկար չտեւեց. Հայկի նետը, ծակելով Բէլի պղնձի վահանը եւ երկաթի զրահը, վերջ դրեց նորա բռնաւորութեանն. դիւցազնի շահատակութիւնն ի փախուստ դարձուց զարհուրած թշնամի զորքը։

Այս մանրամասնութեանց փոխարէն խորենացին կ'ուանդգ այլ՝ ոչ պակաս հետաքրքրական հատուածներ "անգիր զրոյցի„, որ Հայկի անունն աւելի պայծառ լուսով կը պատեն։ Բէլ, առնելով Հայ դիւցազնի գաղթման լուրը, ուղարկեց նորա մօտ իւր որդոյ մէկին՝ հնազանդութեան կոչելու հպարտ ապատամբին. պատգամի բերանով խորենացին տալիս է աւանդութեան գեղեցկագոյն նմոյշներից մէկը, որի մէջ կ'ապրի Հայ ժողովրդական գուսանների ստեղծող ոգին՝ "Բնակեցեր ի մէջ ցրտութեան սառնամանեաց, այլ ջերուցեալ մեզկեա զցրտութիւն սառուցեալ քո հպարտացեալ բարուցդ եւ հնազանդեալ ինձ՝ կեաց ի հանդարտութեան, ուր հաճոյ է քեզ յերկրիս իմում բնակութեան„ (Ա. Ժա)։ Արհամարհեց Հայկ բռնաւորի հրամանն եւ խիստ պատասխանով յետ դարձուց նորա պատգամին։ Բէլ արշաւեց Արարատ դայ երկիրը. կռվում՝ տեսնելով վտանգի մերձենալն՝ փախստական եկաւ Հայկի մօտ։ Զվհատեցաւ Հայ դիւցազնը, այլ ամենայաթեց իւր նաւազ գնդով թշնամու անկարգ հրոսակին ընդդէմ ելանել, որին կ'առաջնորդէր Բէլ. "Եւ ինքն (Բէլ) գլխանոց ագուցեալ երկաթի, նշանաւորք վերջք, եւ տախտակս զղնձիս թիկանց եւ լանջաց, եւ պահպանակս բարձից եւ բազկաց. գօտեւորեալ զմէջն, եւ յահեկէ զտիրն երկայրի, եւ նիզակն արի ի ձեռի իւրում աջոյ, եւ յահեկումն վահան„։ Դիւցազնի (նոյն իսկ թշնամի ախոյեանի) նպատակելը ախորժելով մանրամասն կը նկարագրեն նոյն հելլեն բանաստեղծը, պարսիկ քերթողը, Ս. Գիրքը եւ Ռուսաց ժողովրդը ամէն անգամ, երբ հերոսը ճակատելու կը պատրաստի. մեր Թրլոյ Դաւիթը, նախ սառնալով Ձենով Ցովանից "Հուսկիկ ջալալին, թոր կէծակին, գուրզ հազարին, շապիկ զրեխին, թագն ի զրեխին, ոսկի քեռամարդ„։ ապա վստահ կը գնայ Մսրամելիքի բանակը։

Ցանուն ազատութեան էր կռիւը, որ կամ ամենայն ստրկութեան էր մատնելու Հայկի տոհմը եւ կամ նորա ձեռքը տալու իշխանութիւն՝ հարեւան ազգերի վերայ. այն վեհ միտքը կը վրդովէր Հայ նահապետին, երբ նա օրհասական մարտից առաջ խրախոյս կարդայ իւր զօրքին՝ "զի կամ մերցուք, եւ ազա՛ մեր ի ծառայութիւն Բելոյ կացցէ. կամ զաջողութիւն մատանց մերոց ինա՛ ցուցեալ, ցրուեսցի ամբոխն, եւ մեք եղիցուք յաղթութիւն ստացեալք„։ Ճակատը տեղի ունեցաւ "յեղեղ ծովակի միոյ, որոյ ալի են ջուրքն, մանուսն ունելով ձկունս յինքեանս„ (ենթադրելու է անշուշտ Վանայ ծովը). Հայկ կարդեց իւր գունդը երեքանկիւնի՝ մակեդոնական՝ ձեւով։ Բէլ, տաստիկ նեղուած, դարձրեց իւր թիկունքը եւ դիմեց դէպի բլուրը որտեղից նա իջած էր. Հայ դիւցազնը պնդեցաւ նորա ետեւից եւ մօտ հասնելով՝ քարշեց իւր "լայնալեզ„ աղեղն. սլաքը՝ անցնելով ալքայի թիկանց միջից՝ երկիր տապալեց հսկային. ահաբեկ եղաւ թշնամի ամբոխը եւ փախստեամբ ապրեցաւ։

Ճակատամարտում՝ կ'ուելացնէ մեր պատմագիրը՝ Հայնահապետը չմնաց մի դաստակերտ, որ "Հայք„ կոչեց, ըստ որում եւ գաւառն անուանեցաւ "Հայոց ձոր„։ Նոյն իսկ արժանայիշատակ բլուրն տացաւ անցքին համապատասխան "Գերեզմանք„ կոչումն, Բէլ ի մարմինն դիւցազնն հրամայեց թաղել Հարքում մի բարձրաւանդակի վերայ՝ ի տեսիլ իւր զարմի։ Հարկաւ հռչակաւոր դիւցազնի անուամբ՝ ըստ ժողովրդի ստուգաբանութեան՝ պէտք է մկրատեր եւ ամէն բողջ երկիրը։

Ասասիկ "անգիր զրոյցի„ թարգմանակուածութիւնն, որ յիշատակել են խորենացին եւ նորա

digitised by A.R.A.R.@

նախորդը եւ որ թուի թէ Հաբը գաւառի բնակչաց մէջ կը շրջէր։ Երկու պատմագրերի՝ կամ լաւ է ասել՝ երկու խմբագրութեանց ուշագիր համեմատութիւնն ցոյց է տալիս, որ այստեղ մեր առջեւ ունենք մի եւ նոյն աւանդութեան երկու եղանակներ. Թերեւս Հայկի շահատակութիւնք գեռ խորենացու ժամանակ այլեւայլ գաւառներում զանազան առասպելեաց նիւթ կը կազմէին, որ ընդ միշտ ընդել է ժամանակի կորստաբեր յժէը ժողովրդի յիշողութիւնից։ Հայկի զրոյցը, որի մէջ սերտ ամփոփուած են ազգի ծնունդն, անուանակոչումն եւ նորա առաջին փառքը, հեշտիւ կարող էին խորենացուց առաջ գուսանաց երգերի մէջ պատուաւոր տեղ բռնել. յամենայն դէպս վէպի այն ընտիր նմոյշներից, որ առաջ կը բերեն մեր երկու մատենագրեր, պարզ է, որ յիշեալ աւանդութիւնն նոցա ժամանակ իրբեւ արձակ զրոյց բերանէ բերան կը պտրտէր (ինչպես այժմ մեր Դաւիթ եւ Մհեր վէպք), որի մէջ տեղ տեղ նշմարելի է ժողովրդական բանաստեղծների արուեստական կնիքը։

Համեմատաբար սուղ եւ հատուկոտոր կը հանդիպանայ Անանուի աւանդած եղանակը, սակայն այն մանրամասնութիւնք, որ միանգամայն կը զատեն նորան երկրորդ խմբագրութիւնից, կը շնորհեն նորան առանձին արժէք եւ նշանակութիւն. մանաւանդ ի նկատի է առնելու հետեւեալ տարբերութիւնք, որոց էական մասն անշուշտ ժողովրդի խաւերում է ածել եւ զարգացել. Անանուն չգիտէ

ա) Բէլի առ Հայկ պատգամաւորութեան,

բ) Նորա հայ նահապետի առջեւ փախուստեան մասին («արքայն տիտանեան... ի սոյն բլուր ուստի էջն՝ վերջոնեալ ելանէ»), որպէս եւ

գ) Խորենացու յիշած հետաքրքրական մանրամասնութիւնն, թէ «Հայկ զդիակն Բելայ պաճուճեալ իմն դեղովք հրամայէ տանել ի Հաբք, եւ թաղել ի բարձրաւանդակ տեղւոջ»։

Դորա փոխարէն խորենացուն ծանօթ չէն

դ) Հայ դիւցազնի երկչոտ փախուստը առաջին ընդհարման միջոցին («խոյս եւս Հայկն յերեսաց նորա [Բելայ] եւ գնայր նա փախստական»), նաեւ

ե) երկու ախոյեանների մէջ տեղի ունեցած խիստ բանակիւռը, որին հետեւեց Բելի մահը, վերջապէս

զ) Թշնամուց խլած աւարի միջոցէպը («եւ նոքա զՀետ մտեալ թափեցին ի նոցանէ երամակս ձիոց եւ ջորեաց եւ ուղտուց»)։

Նշանակութիւնից զուրկ չէ եւ այն հանգամանքը, որ Անանուն Հայկի շահատակութիւնն աւելի հարուստ եւ նուրբ գոյներով է գծած («Եւ Հայկին զտեղի կալեալ պատրաստի ընդդէմ նորա աղեղամբ։ Եւ կանգնէ զկապարձան ի գետնոյ ընդ ինքեան յաղեղն սկայաւրէն կամարին, եւ ընդ գիրկս մտեալ զաւրութեամբ հարկանէ նետիւ զտախտակս երկաթիս, եւ ընդ պղնձի վահանն ի թափ անցուցանէ ընդ մեղէն արձանն»)։[1]

Նոյն իսկ Հայկի ապստամբութիւնն տարբեր բնաւորութիւն կը կրէ երկու պատմագրերի մտ. մինչդեռ Խորենացին Հայ նահապետին իրբեւ խիզախ ապստամբ կը ճանաչէ, մարմնացնելով նորա մէջ ազատութեան վիհ գաղափարը, Անանուն նորա յանդգնագն մարտը սկզբից մինչեւ վերջը իրբեւ կրօնական շահատակութիւն կը մեծարէ. քրիստոնէական ուսման մէջ մկրտուած հայ ժողովուրդը անգիտակցաբար փոխադրել է իւր դիւցազնի վերայ իւր բարեպաշտութիւնն, թերեւս նորա անձնաւորութեան մէջ կամենալով ձուլել Ս. Գրոց Դանիէլի տիպարը, որ «պագանէր երկիր Աստուծոյ իւրոյ», ինչպէս արդէն մատնացոյց արել է Գր. Խալաթեանց։ Այս վառ կրօնական գաղափարը դրդեց Հայկին արհամարել «աստուած կոչել» Բէլին, որ «կանգնեաց զպատկերն իւր եւ ետ երկիր պագանել իբրեւ Աստուծոյ եւ զոհս մատուցանել», եւ մղեց նորան սրբազան մարտի, որի մէջ երկիր տապալեցաւ «աստուած կարծեցեալ հսկայն»։ Բարեպաշտութեան նոյն օգին կը տիրէ մեր արդի ժողովրդական վէպի դիւցազն Աբամելիքին սպանելը իւր հօրը եւ փշրել նորա ուռնայն կուռքերը։[2]

Անանունի հասարակ, կցկտուր, կրկնութիւններով լի ոճը, ոչ պակաս եւս Հայ դիւցազնի փոքրոգի փախուստեան միջադէպը ենթադրել են տալիս, որ նորա խմբագրութիւնն ընդհանրապէս բանաւոր զրոյցի հաւատարիմ արձագանքն կը հանդիսանայ։ Հակառակ դորա՝ խորենացու անձնական ճաշակը, նորան ոգեւորող ազգային պարծանաց գաղափարը դրշմել են իրանց կնիքը աւանդութեան վերայ, ազնուացնելով եւ կենդանացնելով հում եւ անոճ

---

1 Թէ ճակատագրի, թէ Բելի սպառազինութեան եւ թէ մարտի համեմատաբար աւելի ճոխ նկարագրութիւնն, որ ապրիս է մեզ խորենացին, հարկաւ վերագրելու է հեղինակի զարգացող գրչին։ Հմմտ. եւս Գր. Խալաթեանցի «Հին վէպերը», էջ 113։

2 Ցնս իմ «Հայ ժողովրդական դիցաբանական վէպեր», Վիեննա 1903։

digitised by A.R.A.R.@

նիւթը։ Նորա աշքում իւր ազգին փրկութիւն շնորհող Հայ Նահապետը ոչ թէ մի անյայտ "ոմն" էր, ինչպէս Նորան Անանուն կը կոչէ, այլ բարոյական եւ մարմնաւոր յատկութիւններով հարուստ սժտւած մի դիւցազն, որ իւր փառաւոր յաղթութեամբ հիմք դրեց մի խորհրդաւոր հարստութեան։

Այսպէս կառուցեց խորենացին այն հշյակապ, մեծաշուք տաճարը, որ իւր խորհրդաւոր կամարների տակ առաւ "Հայկազեան" հարստութեան թագակիրներին. աւելի քան տասներկու դար մնաց նա անխախտ, անսասան, որպէս մի անառիկ ամրոց, որ բարձրագագաթ ժայռերի վերայ կը հանգչի, ներշնչելով խորին պատկառանք հայ ազգի ուսեալ զաւակներին։ Ցասիիններորդ դարում առաջին անգամ դղրդեցան նորա հիմունքը. յանուն ճշմարտութեան, յանուն գիտութեան խորտակեց քննադատների մուրճը սրբազան տաճարի դռները, մերկացրեց "Հայկազն" դիւցազների կուռքերը եւ յերկիր կործանեց նոցա իրանց հպարտ բարձրութիւնից։

(Շարունակելի։) Բ. ԽՍԱԼԱԹԵԱՆՑ

ՔՆՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ
ԵԶՆԿԱՅ ՆՈՐԱԳԻՒՏ ՁԵՌԱԳՐԻՆ

Նագմնցին

Գ. Տ. ՄԿՐՏՉԵԱՆ եւ Հ. Բ. ԱՃԱՌԵԱՆ

(Շարունակութիւն։)

Էջ	սոյ	
236	8—9	զշմարտութեան խելամուտ թէն.
	13	կուխագալ.
	18	ինչ (չ տողի վրայ)։
	20	սկիսքն.
	22	գիտիցէ (նախապէս գիր. յետոյ դիծ, յետոյ գիտիցէ)։
237	1	վայելեցէ — վայելեսցէ։
	2	գիտուտ թէն.
	5	վայելելիք (վերջին եչ-ը տողամիջում)։
	9	վաելեցեն — վայելեսցեն.
	11, 18	անդի.
	13	ճարտարութեն (ն տողամիջում. ամբողջ բառը կիսեղծ)։
	17	ի ճարտարութեն.
	19	բարեբարութեն.
	25	վաելելչ.
238	5	յոյ.
	19	առնելոցն (երկրորդ ն տողամիջում)։
	26	վաելեցեն — վայելեսցեն.
239	1	արդ (չինք տող)։
	8	ինչ (տողի վրայ մանրատառ)։
	10	չինչ զնա.
	16	կարվիչ (կ տողամիջում)։
	26	արժանաւորիցէ.
Էջ	սոյ	
240	7—8	փրկութեն ոդոցն.
	11	այնս.
	13	ընդրեալ (ա ընչման նշանով)։
	15	սատանայոց (հմմտ. 128, գ։, 143, ։։ ե. 223, ։)։
	17	եպիդոս (ոդ տողամիջում փոքրատառ)։
	19	համարին.
	25	կատարեալ (երկրորդ ա-ը տողամիջում մանրատառ)։
241	6	ոգոյ.
	13	չեմանուցեալ (չ տողամիջում նորագոյն գրչով)։
	18	խարեցոց (տողի վրայ եղ = խարեցիլոց։
	22	պղատոն (պ տողամիջում)։
243	1—3	չինք Գիրք ըրբոդդ եղէ ոգանդոյն Մարիկնի.
	5	առատարու թեն.
	7	գչիւ գն.
	11, 19	հիւ գն.
	12	գաւ բու թեն.
	13	գա խարհէ (= գաշխարհէ)։
	16	հիւ գեայն.
244	1	յերկինս.
	1, 3, 9	հիւ գն.
	3	ոչիչանաւ թեն (գ ընչման նշանով)։
	10	քաւմէ.
	13	հիւ գեայն.
	16	անուանեցաւ.
	17	սահգնեալ (ն տողամիջում)։
	22	յոդոյ.
245	3, 13	ի հիւ գեայն.
	3	միաբանեալ (վերջի ա-ը ընչման նշանով)։
	8	առ ամա (չինք այլ)։
	13	մեկնեալ (ա-ը ընչման նշանով)։
	14, 19	հիւ գեայն.
	20	արարածոց (ց տողամիջում)։
	25	անս ամբ.
	25	իւրա.
246	9	ընդգրկեցաւ.
	10	որ ոմն. (= որ առաջնն)։
	15	հիւ գն.
	19	հիւ գեայն.
247	1	բարս.
	5	հիւ գեա.
	7	երթալ (գրուած լուսանցքում. ա-ը միւստամ)։
	8	զնմանու թեն.
	10	արդոյ.
	19	հանիցիս (ի ընչման նշանով)։
	20	անդի.
248	7	հցել.
	16	նոն — առաջնն.
	24	ցնայեսուս.
249	17	մանաւարս (ր տողամիջում մանրատառ)։
	26	յապրլատակեաց.
250	1	առ. (տողամիջում փոքրատառ)։
	6	անդի բարդն.
	7	սկիսքն (առաջին ս տողամիջում մանրատառ)։
	19	իմաստաւ թեն (չինք թէ)։
	24	զարարածոն.
251	9	կարգաղու թեն.
	10	եւ եթէ.
	11	իմաստաւ թեն.
	15	նմանոց չիարէր (երկրորդ բ մանրատառ տողամիջում)։

digitised by A.R.A.R.@